

«Բանբեր Երևանի համալսարանի»
հասարակական գիտությունների հանդեսի
բովանդակության վերլուծություն՝
գենդերային և կանանց հիմնախնդիրներին
անդրադարձի տեսանկյունից

**«Բանբեր Երևանի համալսարանի» հասարակական գիտությունների հանդեսի
բովանդակության վերլուծություն՝ գենդերային և կանանց
հիմնախնդիրներին անդրադարձի տեսանկյունից**

«Բանբեր Երևանի համալսարանի» հասարակական գիտությունների քառամսյա հանդեսը լույս է տեսնում 1967 թվականից Երևանում: «Բանբեր»-ում տպագրվում են ԵՊՀ-ում և հանրապետության այլ գիտակրթական հաստատություններում կատարվող գիտական աշխատանքները, զգալի տեղ է հատկացվում հայագիտական հարցերին: Մինչև 2010 թ. հունվարի 1-ը հանդեսը տպագրվել է տարեկան երեք անգամ՝ 15 մամուլ ծավալով: 2010-2016 թթ. «Բանբերը» լույս է տեսել նույն պարբերականությամբ, բայց մասնագիտական հոսկյալ վեց շարքերով՝

1. «Հայագիտություն»,
2. «Բանասիրություն»,
3. «Իրավագիտություն»,
4. «Փիլիսոփայություն, Հոգեբանություն»,
5. «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն»,
6. «Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն»:

2015 թվականից սկսած՝ համաձայն ՀՀ գրապալատի պահանջների, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի շարքերը դարձել են առանձին հանդեսներ՝

1. «Հայագիտություն»,
2. «Բանասիրություն»,
3. «Իրավագիտություն»,
4. «Փիլիսոփայություն և հոգեբանություն»,
5. «Սոցիոլոգիա, տնտեսագիտություն»,
6. «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»,
7. «Ռուս բանասիրություն»:

ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի կողմից դիտարկվել են Բանբեր հանդեսի բոլոր հրատարակումները՝ սկսած 1990 թվականից, և առանձնացվել են այն հոդվածները, որոնք որևէ կերպ անդրադարձել են գենդերային և/կամ կանանց հիմնախնդիրներին:

Արդյունքում՝ թվով 2406 հոդվածներից առանձնացվել է ընդամենը 21 հոդված:

Մինչ 2000-ական թվականները, գիտական հանդեսում տեղ է գտել 3 հոդված՝ 1991, 1995 և 1997 թվականներին: Այս տարիներին հրատարակված հոդվածներում և դրանց վերնագրերում, թերևս, բացակայում են «գենդեր», «գենդերային» եզրույթները:

2001-2010 թվականներին տպագրվել է 9 հոդված՝ այդ տարիների թվով 785 հոդվածների շարքում:



Հողվածների քանակը նույնն է մնացել նաև 2014-2016թթ լույս տեսած հանդեսներում: Այս տարիների ընթացքում ևս տպագրվել է թվով 9 հողված, որոնք անդրադարձել են գենդերային և կանանց հիմնախնդիրներին: Այս շարքում հողվածներից մեկի վերնագրում տեղ է գտել «գենդերային» եզրույթը:

Հողվածների 21 հեղինակներից (24՝ այդ թվում համահեղինակներ) **16-ը եղել են կանայք, մյուս 8-ը՝ տղամարդիկ:**

Մի քանի ուշագրավ փաստեր և օրինաչափություններ՝ առանձնացված հողվածների հետ վերլուծության արդյունքում.

- **Հողվածներից 7-ը նվիրված են գրականության, արվեստի ոլորտի ներկայացուցիչների մոտեցումներին կնոջ նկատմամբ:**
 - ✓ Մասնավորապես, դրանցից մեկում հեղինակը ներկայացնում է, որ կանանց հարցը՝ իբրև հասարակական խնդիր, արժարժվել է Լ. Շանթի ստեղծագործական առաջին շրջանի երկերում, որ ստեղծագործական երկրորդ շրջանում արդեն, Գրիգոր Ջոհրայից հետո ու նրա հետ Շանթը դարձել է կնոջ հոգեբանությունը լավագույն կերպով պատկերող հեղինակը և ստեղծել է կնոջ բազմաթիվ կերպարներ, որոնք կարող են իրենց արժանի տեղը գրավել համաշխարհային գրականության հերոսների շարքում:¹
 - ✓ Հաջորդ հեղինակը հողվածում ներկայացրել է Ռաֆֆուն՝ որպես կնոջ ազատագրության խնդիրն մեծ ուշադրություն հատկացնող մտածող: Հեղինակը գրում է, որ Ռաֆֆու գեղագիտական իդեալը մարդասիրությունն էր և, որ Ռաֆֆին իր ստեղծագործություններում բարձրացրել է կնոջ կյանքի նպաստավոր պայմանների ապահովության, նահապետական հետամնաց կապանքներից ազատագրելու խնդիրը:²
 - ✓ Այս շարքի հողվածների հեղինակներից Ռ.Հ. Խաչատրյանը պատմատիպաբանական վերլուծության փորձով ներկայացրել է հայ ժողովրդական երկերում կնոջ կերպավորման եղանակները:³
 - ✓ Շարքի հաջորդ հողվածում ներկայացված է մայրապաշտության իսահակյանական դրսևորումները: Ըստ հեղինակի, Իսահակյանի ստեղծագործությունների, օրագրային գրառումների, նամակների, մտերիմների հիշողությունների վկայությամբ գրողը պաշտամունքի հասնող զգացմունքներ է տածել մոր՝ Ալ.Ղլտճյան-Իսահակյանի հանդեպ: Մայրական սիրո թեման հեղինակին զբաղեցրել է ստեղծագործական վաղ տարիներից և տասնամյակների հետ միմյանց են հաջորդել բանաստեղծություններ, լեզենդներ, ասույթներ, փիլիսոփայական խտացումներ և այլն:⁴

¹ Վարդանյան Ն., Կանանց հարցը Լևոն Շանթի առաջին շրջանի երկերում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (110), Երևան 2003թ., էջ 179-184

² Քալոյան Ա., Կնոջ ազատագրության ռաֆֆիական ըմբռնումները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (118), Երևան 2006թ., էջ 160-168

³ Խաչատրյան Ռ.Հ., Կնոջ կերպավորման եղանակները հայ ժողովրդական երկերում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (85), 1995թ., էջ 164-172

⁴ Ջաքարյան Մ., Մայրապաշտություն և Իսահակյանի «Հիշատակարանում», «Բանբեր Երևանի համալսարանի», 2 (74), Երևան 1991թ., էջ 160-166

- ✓ Հողվածագիր Ա. Գլջյանն անդրադարձել է Հ.Պարոնյանի՝ «Թատրոնի» շրջանի արձակ երկերին և ներկայացրել է, թե ինչպես է Պարոնյանն այդ երկերում պատկերում ժամանակի հերոսուհուն, ինչ էր առանձնապես հուզում գրողին, ինչպես էր նա վերաբերում ժամանակի հերոսների բացահայտման խնդրին: Ըստ հողվածի հեղինակի, առաջին հայացքից կարող է թվալ, թե Պարոնյանը խոսում է կենցաղի բաղադրիչ հանդիսացող կնջ մասին՝ երգիծելու նպատակով, բայց իրականում երգիծական արտահայտչամիջոցների օգտագործումը, փիլիսոփային վայել խորաթափանցությամբ նա բացահայտում է կնոջ բնությունը:⁵
- ✓ «Թագուհիների պատկերագրումը հելլենիստական Հայաստանի արվեստում»՝ այսպիսին է հերթական հողվածի վերնագիրը, որում հեղինակ Վիկտորյա Վասիլյանը ներկայացնում է, թե ինչպես Հելլենիստական դարաշրջանի Հայաստանում թագավորների հետ միասին թագուհիները և ունեցել են աստվածային պաշտամունք ու պատիվներ:⁶
- ✓ Թվով յոթերորդ հողվածը նվիրված է կնոջ ազատագրության և հասարակական դերի հարցերի ներկայացմանը «Որոգայթ Փառաց»-ում: Այստեղ հեղինակն անդրադարձել է այն հանգամանքին, որ, չնայած հայ իրականության մեջ այս կարգի առաջադիմական մտքերի շատ կարելի է հանդիպել, սակայն իրական կյանքում կինը ստորադասվել է տղամարդուց, սահմանափակվել են նրա իրավունքներն ու ազատությունները և միայն միջնադարյան աշխարհայացքային կապանքներից հետո է հնարավոր դարձել շահագրգիռ հետաքրքրություն ցուցաբերլ կնոջ հիմնախնդիրների նկատմամբ: Եթե միջնադարյան կրոնական գաղափարախոսության գերակայության պայմաններում աստվածային (բնական) իրավունքի սուբյեկտը գերազանցապես տղամարդն էր, ապա նոր մտածողության կրողները սուբյեկտ են դարձնում նաև կնոջը: Հեղինակն ուշագրավ է համարում այն հանգամանքը, որ ոչ միայն առանձնահատուկ տեղ է տալիս կնոջ իրավունքների ու ազատությունների ընդլայնմանը, այլև, որ ավելի կարևոր է, դրանց սահմանադրական պաշտպանությանը:⁷

• **Առանձնացված 3 հողվածներում անդրադարձ է կատարվել կանանց քաղաքական, և 1-ում՝ քաղաքացիական մասնակցությանը:**

- ✓ Հողվածներից առաջինը հիմնականում ներկայարցնում է, թե ի՞նչը հատկապես նպաստեց կանանց սոցիալական դերերի և առաջին հերթին քաղաքական վարքի անհամեմատ բարձրացմանը: Մանրամասնվում են

⁵ Գլջյան Ա., ժամանակի հերոսուհու պատկերումը Հ.Պարոնյանի արձակ երկերում («Թատրոն», 1874-1877թթ.), 2 (74), «Բանբեր Երևանի համալսարանի», 2(92), Երևան 1997թ., էջ 169-173

⁶ Վասիլյան Վ., Թագուհիների պատկերագրումը հելլենիստական Հայաստանի արվեստում, «Բանբեր Երևանի համալսարանի», 144.1, Երևան 2014թ. (№ 3), էջ 18-33

⁷ Մելքունյան Գ., Կնոջ ազատության և հասարակական դերի հարցերը «Որոգայթ Փառաց»-ում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (124), Երևան 2008թ., էջ 126-134



քաղաքական մասնակցության գործընթացներում կանանց ներգրավման, նրանց դերի բարձրացման գործոնները:⁸

- ✓ Մեկ այլ հոդվածում հեղինակներ Գ.Շահնագարյանը և Ս. Հովհաննիսյանը ներկայացրել են տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական ներգրավման առաջնայնությունների խնդիրները:⁹
 - ✓ Այս շարքի երրորդ հոդվածում ներկայացվում է Հայաստանի քաղաքական կյանքում կանանց մասնակցության հիմնախնդիրներն առհասարակ: Ներկայացվում է կանանց իրավունքների պաշտպանության մի շարք փաստաթղթերի, օրինագծերի, կոնվենցիաների և գործողությունների պլանների վերլուծություն և ցույց է տրվում Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության իրական պատկերը:¹⁰
 - ✓ Իսկ կանանց քաղաքացիավարական մասնակցությանը նվիրված հոդվածի հեղինակ Ա.Ալեքսանյանը ներկայացնում է, որ քաղաքացիավարական ժողովրդախիշխանական կայացման ժամանակակից պայմաններում առանցքային նշանակություն ունի Հայաստանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման գործընթացը, և խոսում է դրա արդյունավետ իրականացման ուղիների և հնարավորությունների մասին:¹¹
- **2005 թվականին հրատարակվել է միայն մեկ հոդված՝ նվիրված կանանց կրթությանը, որում ներկայացվում է արևելահայ մանկավարժական մամուլում կանանց կրթության հիմնախնդիրը:**
 - ✓ Հոդվածի հեղինակ Ա.Խ.Բրուտյանը հոդվածում մանրամասն ներկայացնում է, որ արևելահայ պարբերական մամուլի էջերում XIX դարի երկրորդ կեսին քննարկվող բազմաթիվ հիմնախնդիրների շարքում որոշակի տեղ էր հատկացվում կանանց հարցին, որ կնոջ ազատության, իրավահավասարության, հասարակական դերի, կրթության խնդիրներով հանդես էր գալիս «Հյուսիսսփայլ» ամսագիրը, որ Մ.Նալբանդյանի շնորհիվ նորովի մոտեցում է տրվել ինչպես հայ հասարակական կյանքին, այնպես էլ՝ կանանց հարցին: Ըստ հեղինակի «Հյուսիսսփայլ» առաջին սկսեց կանանց ազատության, իրավահավասարության, ինչպես նաև կրթության ու դաստիարակության հարցերի համակողմանի քննարկումը և իր ուսանելի փորձը հաղորդեց իրենից հետո հրապարակ իջած հայ մամուլի գրեթե բոլոր օրգաններին, այդ թվում նաև մանկավարժական մասնագիտական պարբերականներին:¹²

⁸ Շափաղայան Հ., Կանայք քաղաքականության մեջ. Կարծրատիպեր և արդիականություն, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան 2015, № 3 (18), էջ 67-78

⁹ Շահնագարյան Գ., Հովհաննիսյան Ս., Տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական ներգրավման առաջնայնությունները, 2016 № 3 (21), էջ 3-13

¹⁰ Հակոբյան Հ., Կանայք Հայաստանի քաղաքական կյանքում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան 2004թ., 3 (114), էջ 204-211

¹¹ Ալեքսանյան Ա., Կանանց քաղաքացիավարական ներկայացվածության հիմնախնդիրը ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան 2014, 144.6, (№ 3), էջ 36-46

¹² Բրուտյան Ա.Խ., Կանանց կրթության հիմնախնդիրը XIX դարի արևելահայ մանկավարժական մամուլում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան 2005, 3 (117), էջ 156-161



- **Իրավական և իրավաբանական ուղղվածությամբ հանդեսում կանանց հիմնախնդիրներին անդրադարձ է կատարվել միայն 2 հոդվածի շրջանակներում՝ սեռական բնույթի գործողությունների հարկադրման և երիտասարդ կանանց հանցավորության տեսանկյունից:**
 - ✓ Առաջին հոդվածում քննարկվում է հանցագործությունը, որի հիմնական անմիջական օբյեկտը անձի սեռական անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:¹³
 - ✓ Իսկ ահա երկրորդ հոդվածը նվիրված է ՀՀ-ում երիտասարդ կանանց հանցավորության ժամանակակից միտումների ուսումնասիրությանը: Հոդվածում հեղինակի կողմից քննարկման է ենթարկվել կանանց հանցավորության և երիտասարդ կանանց հանցավորության հարաբերակցությունը:¹⁴

- **Կանանց տնտեսական ակտիվության, տնտեսության մեջ հավասարության հիմնախնդիրներին անդրադարձ կա կրկին 2 հոդվածում.**
 - ✓ Դրանցից մեկը նվիրված է Վանաձորի կանանց աշխատանքային միգրացիայի նկարագրությանը, որտեղ հեղինակ Մ. Ղարաքեչիշյանը որպես աշխատանքի նպատակ ներկայացրել է կանանց կայուն միգրացիոն հոսքերի ձևավորման և գործառույթի վրա ազդեցություն ունեցող սոցիալական ցանցային գործոնների սոցիոլոգիական վերլուծությունը՝ Վանաձոր քաղաքի օրինակով:¹⁵
 - ✓ Մյուս հոդվածում հեղինակ Թ. Հովհաննիսյանը ներկայացնում է կանանց՝ ձեռնարկատիրության ոլորտում ներգրավվածության ընդհանուր հիմնախնդիրները՝ «Կինը և ձեռնարկատիրությունը Հայաստանում» վերնագրով:¹⁶

- **2005 և 2014 թվականին լույս տեսած երկու հոդվածներ ներկայացնում են գենդերային հիմնախնդիրների և մարդկային (սոցիալական) կապիտալի միջև առկա զուգահեռները:**
 - ✓ Մասնավորապես՝ հոդվածներից մեկը նվիրված է ՀՀ-ում արտագաղթի, գենդերային ռիսկերի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխկապվածությանը, որտեղ անդրադարձ է կատարվում գենդերային ռիսկերի, միգրացիոն գործընթացների և մարդկային կապիտալի

¹³ Մարկոսյան Մ., Սեռական հարաբերություն կամ սեռական բնույթի գործողությունների հարկադրման որակման որոշ հարցեր, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան 2015, № 1 (16), էջ 52-61

¹⁴ Սիմոնյան Ս., Երիտասարդ կանանց հանցավորությունը Հայաստանի Հանրապետությունում,

¹⁵ Ղարաքեչիշյան Մ., Վանաձորի կանանց աշխատանքային միգրացիոն հոսքերի առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան 2015, № 2 (17), էջ 20-26

¹⁶ Հովհաննիսյան Թ., Կինը և ձեռնարկատիրությունը Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի», 143.5, Երևան 2014, (№ 2), էջ 44-56

վերարտադրությանը՝ ՀՀ-ում սոցիալական փոփոխությունների պայմաններում:¹⁷

- ✓ Երկրորդ հոդվածում (2005թ) ներկայացվում է ժամանակակից հայ հասարակության գենդերային մոբիլության գործընթացում սոցիալական կապիտալի ունեցած դերն ու ազդեցությունը:¹⁸

- **Ուսումնասիրված վերջին կատեգորիան հայագիտությունն է: Այստեղ հոդվածները հիմնականում նվիրված են ազգային արժեքների և սովորույթների ներկայացմանը:**

- ✓ Առանձնացված հոդվածներից մեկը ներկայացնում է կնոջ հղիության պահպանմանը նվիրված ազգային սովորույթներն ու ծեսերը, որոնք տարածված են եղել աղձնիքահայերի շրջանում:¹⁹
- ✓ 2010 թվականին հրատարակված ևս մեկ հոդված ներկայացնում է գենդերային ինքնությունը ազգային համատեքստում, որտեղ ներկայացվում է գենդերային ինքնության տեղն ու նշանակությունը սոցիալական փոփոխարարությունների հաստատման ընթացքում և քննարկվում են գենդերային ինքնության դրսևորումները ազգային և մշակութային համատեքստում:²⁰

- **2001 թվականի հրատարակված հանդեսներից մեկում ներկայացված է հոդված, որում հեղինակ Ս.Հարությունյանը խոսում է սեռային պատկանելիության գիտակցման հարցի և սեռական ու սեռային դաստիարակության հարցերի շուրջ:**

Հեղինակը պնդում է, որ սեռական կողմնորոշման, սեռական հակման վերաբերյալ նախապատվությունների ձևավորումը հոգեսեռական զարգացման կենտրոնական խնդիրներից է: Այդ տեսությունն առավել հիմնված է զարգացման հոգեբանության, քան պաթոսեռաբանության տեսության վրա: Սեռական նախապատվությունների ձևավորումը, ըստ հեղինակի, սեռական կողմնորոշման կայացման կողմերից մեկն է, հետևաբար, կարելի է եզրակացնել, որ սեռային և սեռական դաստիարակության մեջ անհրաժեշտ է իմանալ սեռի փոփոխարարությունները նաև այն, թե ինչպես են դրանք ձևավորվում հասարակական փոփոխարարությունների ընթացքում:²¹

¹⁷ Աստվածատուրով Ս., Մարգարյանյան Հ., Արտագաղթի, մարդկային կապիտալի վերարտադրության և գենդերային ռիսկերի փոխկապվածությունը Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր Երևանի համալսարանի», 143.5, Երևան 2014թ. (№ 2), էջ 3-12

¹⁸ Թադևոսյան Գ., Շախսովարյան Ա., Սոցիալական կապիտալի դերը ժամանակակից հայ հասարակության գենդերային մոբիլության գործընթացում, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (117), Երևան 2005թ., էջ 162-169

¹⁹ Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի՝ կնոջ հղիության պահպանմանը վերաբերող սովորույթներն ու ծեսերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 131.1, Երևան 2010թ., էջ 26-34

²⁰ Գևորգյան Հ. Է., Գենդերային ինքնությունը ազգային ինքնության համատեքստում, Բանբեր Երևանի համալսարանի», 130.5, Երևան 2010թ., էջ 50-54

²¹ Հարությունյան Ս., Սեռային պատկանելիության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (105), Երևան 2001թ., էջ 169-175

Հոդվածի հեղինակ/-ներ	Վերնագիր	Հղում	Հրատ. N, Տարեթիվ
Գոհար Շահնագարյան, Սիրան Հովհաննիսյան	«Տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց քաղաքական ներգրավման առաջնայնությունները»	http://ysu.am/files/01G_Shah_nazaryan_S_Hovhannisyan.p df	2016 № 3 (21), էջ 3-13
Հասմիկ Շախաթյան	«Կանայք քաղաքականության մեջ. Կարծրատիպեր և արդիականություն	http://ysu.am/files/06H_Shap_ahatyan.pdf	2015 № 3 (18), էջ 67-78
Մելինե Ղարաբեշիշյան	«Վանաձորի կանանց աշխատանքային միգրացիոն հոսքերի առանձնահատկությունները»	http://ysu.am/files/03M_Ghar_akeshishyan.pdf	2015 № 2 (17), էջ 20-26
Միսակ Մարկոսյան	«Սեռական հարաբերության կամ սեռական բնույթի գործողությունների հարկադրման որակման որոշ հարցեր»	http://ysu.am/files/06M_Mark_osyan.pdf	2015 № 1 (16), էջ 52-61
Տիգրան Սինոնյան	«Երիտասարդ կանանց հանցավորությունը Հայաստանի Հանրապետությունում» (հոդվածը ռուսերեն լեզվով)	http://ysu.am/files/06T_Simo_nyan_r.pdf	142.3, 2014, էջ 62-66
Աշոտ Ալեքսանյան	«Կանանց քաղաքացիավարական ներկայացվածության հիմնախնդիրները ՀՀ-ում»	http://ysu.am/files/05A_Aleks_anyan-1427466213-.pdf	144.6, 2014 (№ 3), էջ 36-46
Վիկտորիա Վասիլյան	«Թագուհիների պատկերազրույցում հելլենիստական Հայաստանի արվեստում»	http://ysu.am/files/03V_Vasily_an-1427286107-.pdf	144.1, Երևան 2014թ. (№ 3), էջ 18-33
Սեդրակ Աստվածատուրով, Հարություն Մարգարյանյան	«Արտագաղթի, մարդկային կապիտալի վերարտադրության և գենդերային ռիսկերի փոխկապվածությունը Հայաստանի Հանրապետությունում»	http://ysu.am/files/01S_Astva_tsaturov_H_Marzpanyan.pdf	143.5, 2014թ. (№ 2), էջ 3-12
Թամարա Հովհաննիսյան	«Կինը և ձեռնարկատիրությունը Հայաստանում»	http://ysu.am/files/06T_Hovh_annisyanyan.pdf	143.5, 2014թ. (№ 2), էջ 44-56
Ռաֆիկ Նահապետյան	«Աղձնիքահայերի կնոջ հղիության պահպանմանը վերաբերող սովորույթներն ու ծեսերը»	http://ysu.am/files/03R_Naha_petyan.pdf	131.1, Երևան 2010թ., էջ 26-34
Հասմիկ Գևորգյան	«Գենդերային ինքնությունը ազգային համատեքստում»	http://ysu.am/files/06H_Gevo_rgyan.pdf	130.5, Երևան 2010թ., էջ 50-54
Գագիկ Մելքունյան	«Կնոջ ազատության և հասարակական դերի հարցեր «Որոգայթ Փառաց»-ում»	http://ysu.am/files/10G_Melg_umyan.pdf	1 (124), Երևան 2008թ., էջ 126-134
Անժելա Քալոյան	«Կնոջ ազատագրության ռաֆֆիական ըմբռնումները»	http://ysu.am/files/14A_Qaloy_an.pdf	1 (118), Երևան 2006թ., էջ 160-168
Անահիտ Բրուտյան	«Կանանց կրթության հիմնախնդիրը XIX դարի արևելահայ մանկավարժական մամուլում»	http://ysu.am/files/16A_Brutyan.pdf	3 (117), Երևան 2005թ., էջ 156-161



Գոհար Թադևոսյան, Աննա Շախսուվարյան	«Սոցիալական կապիտալի դերը ժամանակակից հայ հասարակության գեներացիային մոբիլության գործընթացում»	http://ysu.am/files/17G_Tadevosyan_A_Shakhsuvaryan.pdf	3 (117), Երևան 2005թ., էջ 162-169
Հ.Հ. Հակոբյան	«Կանայք Հայաստանի քաղաքական կյանքում»	http://ysu.am/files/24H_Hakobyan.pdf	3 (114), Երևան 2004թ., էջ 204-211
Նվարդ Վարդանյան	«Կանանց հարցը Լևոն Շանթի առաջին շրջանի երկերում»	http://ysu.am/files/22N_Vardanyan.pdf	2 (110), Երևան 2003թ., էջ 179-184
Սվետլանա Հարությունյան	«Սեռային պատկանելիության գիտակցման հարցի շուրջ»	http://ysu.am/files/22S_Harutyunyan.pdf	3 (105), Երևան 2001թ., էջ 169-175
Արսեն Գլջյան	«Ժամանակի հերոսուհու պատկերումը Հ.Պարոնյանի արձակ երկերում («Թատրոն», 1874-1877թթ.)»	http://ysu.am/files/20A_Gljyan.pdf	2 (92), Երևան 1997թ., էջ 169-173
Ռ.Հ. Խաչատրյան	«Կնոջ կերպավորման եղանակները հայ ժողովրդական երկերում»	http://ysu.am/files/16R_Khachaturyan.pdf	1 (85), 1995թ., էջ 164-172
Մարի Զաքարյան	«Մայրապաշտությունը Ավ.Իսահակյանի «Հիշատակարանում»»	http://ysu.am/files/14M_Zakaryan.pdf	2 (74), Երևան 1991թ., էջ 160-166

